Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

[1] Դուրս գրման ամսաթիվ			[2] Սերիա	[3] Համար
26	Հունիս	2019 թ.	Ա	7550357902
[4] Մատակարարման ամսաթիվ			Ճշգրտվող հաշվի	
26	Հունիս	2019 թ.	Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 0 3 4 4 8
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 0 3 4 4 8 / 1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ — N 11500166513800
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2
[13] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[19] Լրացուցիչ տվյալներ	

[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը)	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	09102119 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող՝ PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

26/06/2019 14:45:58

Ստացող
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

ՈՐՈՇՈՒՄ

Ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր
փորձաքննություն նշանակելու մասին

06 մարտի 2019թ. ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի պետ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Ա.Նահապետյանս, քննարկելով վարույթիս թիվ 09102119 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2019 թվականի մարտի 04-ին՝ ժամը 00:40-ի սահմաններում, Արմեն Մերուժանի Մուրադյանը /ծնված՝ 30.07.1977թ,բնակվող՝ ք.Երևան Զ. Սարկավագի 32Ա տուն/ Երևան քաղաքի Զ. Սարկավագի 32 տան դիմացի հատվածում կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել է Երևան քաղաքի Զ. Սարկավագի 32 տան բնակիչ Արմեն Վլադիմիրի Փարսադանյանի /ծնված՝ 29.04.1969թ./ հետ, որի ընթացքում վերջինիս ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, իր մոտ ապօրինի կերպով պահվող հրազենով, կրակոցներ է արձակել Արմեն Փարսադանյանի ուղղությամբ, ինչի արդյունքում Արմեն Փարսադանյանը ստացած հրազենային վնասվածքներից մահացել է:

Դեպքի առթիվ 04.03.2019թ. ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09102119 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

04.03.2019թ. որոշում է կայացվել Արմեն Փարսադանյանին որպես տուժող, իսկ վերջնիս կնոջը՝ Լիաննա Հախվերդյանին տուժողի ներկայացուցիչ ճանաչելու մասին: Որպես վկա հարցաքննվել է Արմեն Մուրադյանի մայրը՝ Սեդա Մուրադյանը, ով ցուցմունք է տվել այն մասին, որ ինքը և Արմեն Մուրադյանը բնակվել են Երևան քաղաքի Զ.Սարկավագի փողոցի 32Ա տանը: Մի քանի տարի առաջ Երևան քաղաքի Զ.Սարկավագի փողոցի 32 տան սեփականատերն իր տան ջեռուցման կաթսայի ծխատար խողովակն իրենց թույլտվությամբ անցկացրել է իրենց ավտոտնակի մեջով՝ պարտավորվելով հետագայում այն տեղափոխել, սակայն այդպես էլ մինչև օրս չի տեղափոխել: Նշված հարցի շուրջ 2019 թվականի մարտի 04-ին՝ ժամը 00:15-ի սահմաններում, Արմեն Մուրադյանը վիճաբանել է նշված տանը վարձակալական հիմունքներով բնակվող Արմեն Փարսադանյանի հետ: Ինքը փորձել է հանգստացնել իր որդուն, իսկ Արմեն Փարսադանյանի կինը հանգստացրել է իր ամուսնուն: Միմյանց քաշքշելուց հետո նրանք հանգստացել են և յուրաքանչյուրը գնացել են իրենց տուն: Ինքն այդ ընթացքում մի պահ գնացել է տան դիմաց գտնվող գերեզմանատան մոտ և հետ է վերադարձել: Երբ վերադարձել է, տեսել է, որ Արմեն Մուրադյանը կրկին վերադարձել է և Արմեն Փարսադանյանին է կանչում: Վերջինս տանից դուրս է եկել և մոտեցել է իրենց: Նրա մի ձեռքին եղել է ցախավել, իսկ մյուս ձեռքին՝ դանակ: Ինքը և Արմեն Մուրադյանը գտնվել են փողոցում, իսկ Արմեն Փարսադանյանը ցանցապատ բակում: Վերջինս չի հասցրել

բակից դուրս գալ և Արմեն Մուրադյանը ձեռքին եղած ատրճանակից կրակել է Արմեն Փարսադանյանի ուղղությամբ: Ինքը լսել է երկու կրակոցի ձայն: Արմեն Փարսադանյանը հետ է գնացել տուն և լսվել է նրա կնոջ բղավոցի ձայները: Ինքը մտել է ներս և տեսել է, որ դեմքով դեպի հատակը պառկած է Արմեն Փարսադանյանը, իսկ բերանից արյուն է հոսում: Մեջքի վերին շրջանի աջ անկյունում տեսել է ծակված հետք, որտեղից արյուն է հոսել: Մինչև շտապօգնության ժամանելն ինքը ստուգել է Արմեն Փարսադանյանի զարկերակի ճնշումը և հասկացել է, որ նա մահացած է: Դեպքից հետո որդուն չի տեսել: Նրա գտնվելու վայրի մասին տեղեկություն չունի:

Որպես վկա հարցաքննվել է Արմեն Փարսադանյանի կինը՝ Լիաննա Հախվերդյանը, ով դեպքի վերաբերյալ նույնաբովանդակ ցուցմունք է տվել այն մասին, որ 2019 թվականի մարտի 04-ին՝ ժամը 00:20-ի սահմաններում, Արմեն Մուրադյանը հայհոյանքներ հնչեցնելով դուրս է կանչել իր ամուսնուն՝ Արմեն Փարսադանյանին և ծխատարի հարցի շուրջ վիճաբանել են միմյանց հետ, որից հետո իրենք տուն են մտել: Մոտավորապես 3 րոպե անց Արմեն Մուրադյանը նորից է հայհոյանքներ հնչեցնելով դուրս կանչել Արմեն Փարսադանյանին և մինչև վերջինս բակով քայլելով մոտեցել է բակի դռանը՝ Արմեն Մուրադյանը ձեռքին եղած ատրճանակով նշան է բռնել Արմեն Փարսադանյանի ուղղությամբ և հնչել են միմյանց հաջորդող թվով 3 կրակոցներ: Դրանից հետո Արմեն Փարսադանյանը վիրավորված վիճակում տուն է մտել և ընկել խոհանոցի հատակին ու մահացել:

04.03.2019թ. որոշում է կայացվել Արմեն Մուրադյանին ձերբակալելու մասին, որի կատարումը հանձնարարվել է ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի աշխատակիցներին:

Նույն օրը՝ ժամը 21:00-ին Արմեն Մուրադյանն ինքնակամ ներկայացել է ՀՀ ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին և ներկայացրել հանցագործության գործիք հանդիսացող ատրճանակը: Վերջինս ձերբակալվել է:

Արմեն Մուրադյանը, որպես կասկածյալ տվել է խոստովանական ցուցմունք այն մասին, որ ինքը և մայրը՝ Սեդա Մուրադյանը բնակվում են Երևան քաղաքի Զ.Սարկավագի փողոցի 32Ա տանը: Ինքը տառապում է օրգանական աֆեկտիվ խանգարում հոգեկան հիվանդությամբ: Մի քանի տարի առաջ իրենց համաձայնությամբ հարևան 32 տան տերը, որի անունը չի հիշում, իրենց տան ծխնելույզն անցկացրել է իրենց տան ավտոտնակի մեջով ու խոստացել է այն հետագայում տեղափոխել, սակայն այդպես էլ մինչև հիմա չի տեղափոխել: 2019 թվականի մարտի 03-ի ցերեկը ինքը դուրս է եկել տանից և գնացել է Երազի այգի, որտեղ մասնակցել է ընկերոջ՝ Էդգարի, մանկահասակ աղջկա ծնունդին: Այնտեղ խմել է մի քանի բաժակ օղի և իր հիշելով գիշերը՝ ժամը 24:00-ի սահմաններում, վերադարձել է տուն: Տուն գնացել է ոտքով և եղել է մենակ: Տան դիմաց տեսել է, որ կանգնած է իրենց հարևան տանը վարձով բնակվող Արմենի ավտոմեքենան՝ իր հիշելով այն < Օպել > մակնիշի է: Որոշել է նրան դուրս կանչել և խոսալ այդ տրուբի /ծխատարի/ համար: Բղավել է «Արմե՛ն, Արմե՛ն» և դուրս է եկել Արմենի կինն ու ասել, որ Արմենը քնած է: Չի հիշում, թե կոնկրետ ինչ են խոսացել, սակայն հիշում է, որ Արմենը դուրս է եկել տանից: Ինքն ասել է նրան, որ զգուշացրել է, որ տան տիրոջը զգուշացնի ծխատարը հանելու համար, ինքն ինչո՞ւ չի զգուշացնում նրան: Այդ պահին չի հիշում, թե կոնկրետ ով

ինչ է ասել և ինչ պատասխան է ստացել: Հիշում է, որ իր մայրը նույնպես դուրս է եկել և իրենց կողքին է եղել, այնտեղ է եղել նաև Արմենի կինը, որի անունը չգիտի: Հիշում է, որ խոսակցության ընթացքում Արմենը ձեռքերով բռնել է իր հագուստից և սկսել է քաշքշել, սակայն իրար չեն հարվածել: Այնպես է ստացվել, որ իրենց բաժանել են և իրենք առանձնացել են: Իր հիշելով նա իր հետևից հայհոյանք է տվել ծնողին ուղղված, որը լսել է նաև մայրը և ինքը նրան ասել է.«Արա՛ էտ ում ես հայհոյում», որից հետո գնացել է իրենց տուն և բարձրանալով տան տանիք, այնտեղից վերցրել է ատրճանակը և հետ է վերադարձել Արմենենց տան մոտ: Այդ ժամանակ բակում մարդ չի եղել: Ինքը բղավել է Արմենին և նա դուրս է եկել տանից ու քայլելով եկել է դեպի իրեն: Ինքը կանգնած է եղել փողոցում, իսկ նա հասել է համարյա ցանցապատ պարիսպին: Նրա ձեռքին եղել է երկաթի կտորի նմանվող ինչ-որ լոմ: Դրսում մութ է եղել, լույս չի եղել վառված և ինքը չգիտի, թե կոնկրետ ինչ առարկա է նրա ձեռքին: Այդտեղ այլևս բան չեն չխոսացել և նա դեռ դուրս չի եկել բակից և ինքը աջ ձեռքում եղած ատրճանակով կրակել է ուղիղ նրա ուղղությամբ, որ վախենար առաջ չգար: Ինքը հիշում է, որ ատրճանակի մեջ երեք հատ պատրոն է եղել և երեքն էլ կրակել է Արմենի ուղղությամբ, սակայն ինչպես նշում է, մութ է եղել և ոչ էլ տեսել է, թե նրա հետ ինչ է եղել և կրակելուց հետո թողել ու հեռացել է այնտեղից: Այնտեղ եղել է նաև իր մայր: Դեպքից հետո տուն չի գնացել: Գիշերը անծանոթ պատահական տաքսի ավտոմեքենայով գնացել է Կիրովական՝ մորքուրի տուն: Հաջորդ օրը ինտերնետով կարդացել է հրապարակված այդ դեպքի մասին և որոշել է հետ վերադառնալ Երևան և ինքնակամ ներկայանալ ոստիկանություն: Իր հետ նաև բերել և հանձնել է սև գույնի Մակարով տեսակի ատրճանակը, որից կրակել է:

06.03.2019թ. թվականին Արմեն Մուրադյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի և 235-րդ հոդվածի 1-ին մասով, այն հանրորեն վտանգավոր արարքի կատարման համար, որ նա 2019 թվականի մարտի 04-ին՝ ժամը 00:20-ի սահմաններում, Երևան քաղաքի Զ.Սարկավագի 32 տան դիմացի հատվածում, նշված տան ջեռուցման կաթսայի ծխատար խողովակն իր ավտոտնակի միջով անցկացնելու հարցի շուրջ վիճաբանել է Երևան քաղաքի Զ.Սարկավագի 32 տանը վարձակալական հիմունքներով բնակվող Արմեն Վլադիմիրի Փարսադանյանի հետ, որի ընթացքում վերջինիս ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, իր մոտ ապօրինի կերպով պահվող հրազենով՝ «Մակարով» տեսակի ՀՊ2247 գործարանային համարի ատրճանակով, թվով 3 կրակոցներ է արձակել Արմեն Փարսադանյանի ուղղությամբ, ինչի արդյունքում Արմեն Փարսադանյանը ստացած հրազենային վնասվածքներից մահացել է:

Առաջադրված մեղադրանքում Արմեն Մուրադյանն իրեն լիովին մեղավոր է ճանաչել և կատարվածի վերաբերյալ տվել է նույնաբովանդակ խոստովանական ցուցմունք:

ՀՀ ԱՆ «Ավան» հոգական առողջության կենտրոն ՓԲԸ-ից կատարված հարցմամբ պարզվել է, որ Արմեն Մուրադյանը 13/11/2014թ հաշվառված է «Օրգանական աֆեկտիվ խանգարում» ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է պարզել մեղադրյալ Արմեն Մուրադյանի հոգեկան լիարժեքությունը, մեղսունակությունը, ունակ լինելը ճիշտ ընկալելու և վերարտադրելու քրեական գործով բացահայտման ենթակա հանգամանքները և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր, որոնց համար հարկավոր են դատական

հոգեբուժության բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, բացի այդ Արմեն Մուրադյանը պետք է ենթարկվի հետազոտությունների, որոնք հնարավոր չեն իրականացնել ամբուլատոր պայմաններում, ուստի՝ ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245-րդ և 247-րդ հոդվածների պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն գործով նշանակել ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն՝ մեկ ամսյա ժամկետով, որի կատարումը հանձնարարել ՀՀ Առողջապահության նախարարությանը կից ստացիոնար դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետներին՝ նրանց նախազգուշացնելով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Արմեն Մուրադյանը նախկինում և ներկայումս, հոգեկան հիվանդությամբ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ հիվանդությամբ և ե՞րբվանից, 04.03.2019թ հանցավոր արարքը կատարելու պահին Արմեն Մուրադյանը տառապել է արդյո՞ք հոգեկան հիվանդությամբ:

բ/ Արմեն Մուրադյանը 04.03.2019թ արարքը կատարելու պահին գիտակցե՞լ է իր գործողությունների բնույթն ու վտանգավորությունը կամ ընդունակ է եղել դրանք ղեկավարելու, այսինքն նա արարքը կատարելու պահին եղե՞լ է մեղսունակ, թե ոչ:

գ/ Արմեն Մուրադյանը ներկայումս տառապու՞մ է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ հիվանդությամբ և արդյո՞ք այն զրկում է նրան իր գործողությունների փաստացի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ ղեկավարելու հնարավորությունից, թե ոչ:

դ/ Արմեն Մուրադյանը հարկադիր բուժման կարիք ունի՞, թե ոչ, եթե այո, ապա ի՞նչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:

ե/ Արմեն Մուրադյանի հոգեկան վիճակը նրան թույլ տալիս է մասնակցելու քննչական կամ դատավարական գործողություններին, թե ոչ:

զ/ Արմեն Մուրադյանն իրեն մեղսագրվող արարքը կատարելիս գտնվել է այնպիսի հուզական վիճակում /հոգեկան լարվածություն, շփոթվածություն, սթրես և այլն/, որը կարող էր էապես ազդել նրա գիտակցության և հոգեկան գործունեության վրա:

է/ Արմեն Մուրադյանը վտանգավո՞ր է հասարակության համար, թե ոչ:

3. Փորձագետներին իրավունք վերապահել պատասխանելու նաև այն հարցերին, որոնք կարող են առաջանալ փորձաքննության ընթացքում:

4. Փորձագետին տրամադրել սույն քրեական գործի նյութերը և ապահովել մեղադրյալ Արմեն Մուրադյանի ներկայությունը:

Բաժնի պետ՝ **Ա.Ա.Նահապետյան**